Յայտնի է որ վարժապետանոց մը այսօր հիմնելու համար առ նուազն 15000 ոսկւոյ գումարի պէտք կայ, և ոչ որ կրնայ համարձակութեան զիմել, բայց երբ Աւսումնասիր հասարակութեան ծանուցուի թէ վարժապետանոցի մը հաստատութեան համար 15000 ոսկւոյ գումարովն մը կայ պատրաստ, ինչպիս

է Ղալաթիոյ եկեղեցւոյ կալուածները և վարժարանին շէնքն ու նորոգ շինուելիք դեռինը, և միայն 1000 ոսկւոյ գումարի մը պէտք կայ այդ հաստատութիւնը կանգնելու, ո՞ր հայ չի փութար իւր լուսնն արկունել այդ հանգանակութեան գանձանակը, որ 'ի հարկէ հանրածանօթ և վտահոտութեան արժանի սեղանաւորի մը զանձապետութեան ներքե պիտի ըլլայ : Կը հետեւի թէ մինչև որ Ժողովը Ղալաթիոյ նկատմամբ Խորհրդոյս առաջարկութիւնը նրկատողութեան առնելով որոշում չիտայ, մեր խոստացած հանգանակութեան ալ չենք կըրնար ձեռնարկել :

Սահմանադրութեան 4-րդ յօդուածը կը արամադրէ թէ Քաղաքական ժողովոյ սարքըն է Տեսուչ Խորհրդոյ կողմէն մասնուցուած ազգագուտ առաջարկութիւնները ու չաղրութեամբ քննել, և անոնց կարեւորութիւնը յայտնուելէն ետե հաստատել կամ դորձադրութեան արգելքները բառնալու ջանք ընել : Սոյն յօդուածին համեմատ մեր առաջարկութեան ազգագուտ ըլլալը և կարեւորութիւնն ունենալը յայտնուէր է, և Ժողովը հաստատեր է, բայց այդպիսով չի մննար. մեծ գործը անոր գործադրութիւնն է. Խորհուրդս գործնական եղանակ մը առաջարկեց ժողովիդ, բայց չզիտեր թէ այդ մասին ինչ նկատողութիւն ունի Ժողովը. կամ պէտք է որ մեր առաջարկութեան դժուարութիւնները երևան դան և ուրիշ գործնական միջոց մը առաջարկէ Ժողովը, կամ եթէ մեր առաջարկութիւնը արգելքներ ունի, այդ արգելքները բառնալու ջանք ընել : Ըստ մեզ մեր առաջարկութիւնը ոչ միայն գործնական է, այլ և ամենին գծուարութիւն իսկ չունի. ամենայն դժուարութիւն 1000 ոսկւոյ գումարին վրայ կը կայանայ, զոր կը խոստանայ Խորհուրդս հանգանակել, եթէ իր առաջարկութիւնը ընդունուի, կամ որ նոյն է, ուրիշ այդպիսի 15000 ոսկւոյ գումարովն պատրաստ միջոց մը ցուցուի :

Կը տեսնէ Պատկառելի Ժողովիդ թէ Խորհուրդս և ոչ իսկ վերջին օրերս բարերար անձէ մը միայն գատարարութեան սոյն նպատակին համար խոստացուած 2000 ոսկւոյ վրայ

կը յենու իր ձեռնարկութիւնն 'ի գլուխ հանելու մասին, թէ և կրնար այդ մասին երևան ելած դժուարութեան ինչ ըլլալը հասկնալ ուղեւ, բայց այդ բանը Ժողովիդ զիտնայիք բանը համարելով կանցնի միայն սա զիտողութիւնն ընել, թէ մինչև հիմայ ազգային Կեդրոնական Ղարչութիւնները ազգային գատարարութեան համար բան մը ըրած չեն որ իրենց անձնառաջին և ստիպողական պարտքն էր : Կանոնադրութեանը կըրտի կը կարտի և ամեն ինչ զրամով կը կատարելագործուի. սոյս պատճառաւ 10-15 տարիէ 'ի վեր հաստատուելու Աւսումնական Խորհուրդները շատ մեծ ու կարեւոր առաջարկութիւններ ունեցեր են, ազգագուտ Խորհուրդներ յղացեր են, բայց Կեդրոնական Ղարչութիւնէն զրամական օգնութիւն չը գտնալուն համար լոկ Խորհուրդ և առաջարկութիւն մնացած են : Աւսումնական Խորհուրդս այս երկար ժամանակեայ փորձը տեսած և զիտցած ըլլալուն համար էր որ գործնական ընթացքի մը հետեւի կուգէ և գրամական խնդրոյն կը միջամտէ և կը վաճառի որ քիչ մ'ալ գատարարութեան համար դրամ հայթայթելու համար հագ տարուի : Գրամ զըրմալը յառաջադիմութեան խոչնդոտ յարուրուցանել է և յառաջադիմութեան զիմադրելը յայտնապէս ազգը 'ի կործանումն մղել է :

Ստորակոյս եմք որ Պատկառելի Քաղաքական ժողովը հանրական կարեւորութեան արժանի այսպիսի փախուկ և խիստ անհրաժեշտ առաջարկութիւն մը ուղարկութեան առնելով, պիտի փութայ յօգուտ ազգային դատարարութեան, ժամ յառաջ պարտուարտչած գործադրութիւնն ընել. որու ակնդէտ կըստէ Խորհուրդս :

11 Ապրիլ 1873 Միակը յարգանք
Ղալաթիա Ստեփանի Ստեփանի
Տ. ԵՔՍԷՐՁԵՆ Ս. ՄԻՔՔԷԼԵԱՆ

Մինչև 18 Յուլիս 1873 տակաւին որոշ պատասխան մը հասած չըլլալով, Խորհուրդս պարտուարեցաւ կրկին անգամ խմբովին ներկայանալ Քաղաքական ժողովին. որ սոյն պատասխան մը հասած անտեղ և արդ չսպասակն էր հողագործական վարժարան մը բանալ :

Կայանալ Քաղաքական ժողովին. որ սոյն պատասխանն առաւ. Սրբազան Նախագահին թէ « մենք վարժապետանոցի խնդրէն աւելի ու մեծ տագնապ ունինք, թողէք այդ խնդրը » :

Խորհուրդս ծանուցեալ Վարչական տագնապին վրայ, սարտուարեցաւ սպասել, մինչև նորընտիր Քաղաքական ժողովոյ հաստատութիւնը, և դարձեալ անմիջապէս ձեռք առաւ վարժապետանոցին խնդրը :

Ի նիստ 21 Յունիս 1874 Խորհուրդս Պատրիարքական Տեղապահ Տ. Արիղոյոս Սրբազան հօր հրաւիրանայ վրայ Քաղաքական ժողովոյ ներկայացաւ, և Քաղաքական ժողովն Աւսումնական Խորհրդոյս բովանդակ առաջարկութիւնը, ինչպէս որ Նախորդ Քաղաքական ժողովն ալ 1873 Յուլիս 25 ի նիստին մէջ որոշած էր, ընդունեց և միայն շինութեան ծախքը հայթայթելու մասին տնօրէնութիւնն աւելի թողու պատշաճ դատեց :

Այսպէս յետ երկամեայ բազում ճգանց Խորհուրդս վարժապետանոցի մը հաստատութեան խնդրոյն աւարտը կը թողու իր յաջորդ շրջանին, և կը մաղթէ գլխ աւոր մէջ, սոյն պիտի 'ի մօտոյ, այս կարևոր հաստատութեան աւարտը տեսնել :

Է .

ՔԱՐԵԳՈՐԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ինչպէս ըսինք Խորհուրդս մէկ կողմէ վարժապետանոցի մը հաստատութեան պէտքը նրկատած աստն, միւս կողմէ ալ անոր նիւթական պիտոյից մասին կարելին և յարմարը կը խորհր Կեդրոնական սնտուկին վրայ բեռ չձգելու մտադրութեամբ :

Խորհուրդս իմացաւ որ Բարեգործական անուամբ ընկերութիւն մը կար հաստատուած, որոյ նպատակն էր հողագործական վարժարան մը բանալ :

Իրաւ էր որ այդ ընկերութիւնը գոյութիւն չունէր սոյս, բայց 3500 ոսկւոյ չափ պատ-

բոստի գրամագրութիւն մը ունէր, և այդ գրամագրութիւնը Հոյ և Հուլիսական երկու ազգայնոց գանձապետութեան տակ զրուած էր յապահովութիւն. ուստի այս խնդիրը այդ գրամին ապահովութեանը և գործադրութեանը մասին քանի մը առաջարկութիւններով Քաղաքական ժողովոյ ուշադրութեանը ներկայեց յատուկ տեղեկագրով մը, որ անպատասխանի մնացած է մինչև ցարդ:

Ը.

ԱՎԱԳԵՄԻԱ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՉ

Մեր լեզուին ուսուցման մասին եղած դանտոյան կարծիքները, զրարարի և աշխարհաբարի գործածութեան խնդիրը, ոմանց մեր բառերուն վրայ ըրած ազնատանքը, անուանց հղովումներու և բացերուն խոնարհմանց համար արուած անհաճոյ ձեւերը Ակադէմեայի մը կազմութեան պէտքը զգալի ըրած էին. զի տութիւններն ալ սխեցին մեր ազգին մէջ մտնել. ուսումնական բառերուն միօրինակութիւն մը տալ պէտք էր, և միայն գիտնաց կաճառ մը կրնայ ձեռննշտութիւն ունենալ զխոնարհան բառեր յորինել և անոնց նշանակութիւնը սահմանել: Ասկէ զատ դասագրոց պէտքը և անոնց յորինումը կրնայ Ուսումնական խորհուրդը ապահովապէս Ակադէմեայի որոշմանը ենթարկել. բայց յստի է որ սոյն գիտնաց կաճառը երկու տեսակ անդամներէ կարելի է բաղկանալ, սրատոյ անդամները և գործող անդամները, և զործող անդամաց ալ վաշելուչ ամսականներ տալ պէտք էր:

Ուսումնական խորհուրդն Ակադէմեայի դիւանին խնդրոյն հետ ընդհանուր տեսչութեան խնդիր մ'ալ ունեցաւ, և խիստ կարևոր դատեց զոյն, վասն զի վարձարանաց մէջ Քարեկարգութեան Հրահանգը գործադրել տարու և անոնց վիճակին վրայ ճշգրիտ տեղեկութիւններ տալու համար յատուկ պաշտօնէի մը պէտքը կը տեսնէր, որոյ պարտականութիւնը պիտի բլար անձամբ ամէն վարձարան տնտեսիլ:

քննել, տեսածը և ըրած կամ պէտք ըլլալից կարգադրութիւնները տեղեկագրել առ Ուսումնական խորհուրդը: Կեդրոնական Վարչութեան:

Այս պէտքը 1863-65 ի Ուսումնական խորհուրդն ալ զգացած և որոշած էր իր տեղեկագրին մէջ նոյնպէս նախորդ Արթական խորհուրդն ալ այս պէտքը ցուցնած էր:

Այս երկու պիտոյնց համար խորհուրդս խնդրեց Քաղաքական ժողովին և ամսական 3000 դրչ ծախք մը Կեդրոնական պիւստէին մէջ յատկացնելու խոստումներն առաւ. բայց այս գումարը գործածելու մասին հաւանութիւն չկրնալով առնուլ, այս երկու խնդրոց տնօրէնութիւնն ալ յաջորդ շրջանին մնաց:

Թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՎԱՐԺԱՊԵՏԱՅ

Ուսումնական խորհուրդն իր պաշտօնադրութեան առաջին օրէն ուզեց զխանալ Մայրաքաղաքի վարձարանաց թիւն ու անոնց վիճակը, և օրինաւոր վիճակացոյց մը պատրաստելու համար Յանձնաժողովոյ մը միջոցաւ Թաղական խորհուրդներէն եկած տեղեկագրերուն մէջ նշանակեալ բոլոր դասատուները հրաւիրեց, և անոնց հմտութեան և գաւառատեղեան մեղքներուն վրայ տեղեկութիւններ ստացաւ, և նոյն Յանձնաժողովին առաջարկութեանը վրայ ձեռնհաս և ծանուցեալ վարձարաններէ բաղկացեալ Վարձարանական ժողով մը կազմելու պէտքն ընդունեց, որոյ պարտականութիւնը պիտի ըլլար ազգ. Վարձարանաց բարեկարգութեան Հրահանգին մէջ նշանակեալ գիտութեանց դասական եղանակին վրայ վիճարանելով, անոնց ուսուցման եղանակը բարեկարգելու և զիւրացնելու միջոցներ գտնել: Այս պայմանին վրայ Վարձարանական ժողովը կազմելով հրաւիրեց ի պաշտօնավարութիւն և նաև ի պաշտօնէ ծանուցելով Քաղաքական ժողովոյ՝ անոր հաւանութիւնն ալ առնուեցաւ: Յանձնաժողովոյ

Ժ.

ԳՍԻԱՌԱԿԱՆ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՅ

Այդպիսի Վարչութեան Քաղաքական ժողովն երբ ձեռնարկել սկսաւ գաւառաց մէջ Սահմանադրութեան գործադրութեանը, Գաւառական ժողովները կազմել և անոնց ձեռք Ուսումնական և այն խորհուրդները ընտրել տալ: Ս. Պատրիարքն 5 փետրվար 1873 պաշտօնադրով ծանուց խորհուրդոյ՝ Ուսումնական խորհուրդին կազմող գաւառաց անունները. և կառավարիչը ուսումնական գործոց համար ըստ Սահմանադրական Հրահանգի յարաբերութեան սիւլ Նոյն գաւառներուն հետ, ուր Սահմանադրութիւնը գործադրուած է:

- Անուանիկ գաւառաց անունները.
- Կարին
- Սերաստիա
- Տրապիզոն
- Նիկոմիդեա
- Պրուսա
- Թէրիքտաղ
- Երզնկայ
- Չիլիկէկ
- Կեսարիա
- Ատանա
- Ալն
- Շապահարահիսար
- Պաղտաս
- Լաիրնէ
- Եւդոկիա
- Անթապ
- Արապիէր
- Խզմիր
- Խարրերդ

Այս առաջարկութեան վրայ գաւառներուն հետեալ շրջարեւալանը յիշեց խորհուրդս:

Կեդրոնական Վարչութեան Արձակական և Քաղաքական Խառն ժողովոյ կազմէ, ընդհանրապէս Թաղական խորհուրդոց համար պատրաստ

ընտրութեանը և առաջարկութեանը այս ժողովոյ անդամոց թիւն հետզհետէ ստուարանալով 89 ի յանդեցաւ: Այս ժողովը բաւական նիստեր ընելէն յետոյ՝ ծանուցեալ Վարչական տաղնաօլին միջոցին դադարեցաւ. սակայն Ուսումնական խորհուրդը վարձարանաց վիճակը, որը ազգային յարաւարկման վիճակէն և անմիջական պաշտօնը կը վարեն, անոնց կացութիւններն բարւոքելու և ապագանին ապահովուելու համար ուզեց անոնց կարողութեան և աստիճանին համեմատ վիսյականներ տալ, ինչպէս որոշուած է Քարեկարգութեան Հրահանգին մէջ:

Այս նկատմամբ դադարեալ չհամարելով Յանձնաժողովոյ պաշտօնը, հրաւիրեց զայն այս պաշտօնին:

Եկեղեցական երգեցողութեան դասատուներուն վիճակը քննելու առթիւ երգեցողութեանց միօրինակ ձեւի վերածելու պէտքը երևան եղաւ:

Խորհուրդս եկեղեցական երգեցողութեան քաջահմուտ անձերէ երաժշտական Յանձնախումբ մը կազմեց, որպէս զի այս կարգի դասատուաց ուսուցման եղանակը և վիճակը որոշուի:

Այս Յանձնախումբն իր առաջին նիստին մէջ շարականի երգոց միօրինակութեան խնդիրը ձեռք առաւ, որն որ Խորհուրդս ծանուց Արձակական ժողովոյ:

Այս Յանձնախումբը ցարդ կը շարունակէ իր պաշտօնը:

Իսկ Արձակատեղեան համար վիսյեալ կրօնագէտ դասատուներու ընտրութիւնը Արձակական ժողովն կատարած և մայրաքաղաքի Թաղական խորհուրդոց ծանուցած ըլլալով, ծանուց նաև Խորհուրդոյ ի տեղեկութիւն:

տուած Սահմանադրական Հրահանգ մը տը-
պագրուած ըլլալով՝ ՚ի մօտոյ անոր մէկ վաւե-
րացեալ օրինակը սխալ ստանաք. որուն մէջ
ազգային վարժարանաց նախնական անհրաժեշտ
ուսմունքը որոշուած և վարժարանաց Հոգա-
բարձութեանց պաշտօնը դժուած է :

Ի հարկէ ցարդ Պաւստական Վարչու-
թիւնը Ուսումնական խորհուրդը կազմած է .
կամ թէ որ կազմած չէ, պէտք է փութայ
կազմել զայն օր յառաջ և ներկայ շրջաբերա-
կանս անոր ներկայացնել :

Կեդրոնական Վարչութեան Ուսումնական
խորհուրդը պարտաւոր ըլլալով յարաբերու-
թիւն ունենալ Պաւստական Վարչութեանց
Ուսումնական խորհրդոյ հետ, կը հրաւիրէ Պա-
ւառիչ Ուսումնական խորհուրդը, որ բարե-
հաճի անմիջապէս Թաղական խորհրդոյ Հրա-
հանգին համեմատ վիճակիդ մէջ գտնուած վար-
ժարանաց Հոգաբարձութիւնները կազմել տալ
տեղական Թաղական խորհրդոյ ձեռք, որ
պէս զի վարժարանաց բարեկարգութեանը հա-
մար պէտք եղած անօրէնութեան ձեւերիկէ :

Տարակոյս չունինք, որ մի և նոյն սրտով
և եռանդով պատրաստ սխալ գտնենք դաւա-
ռիչ Ուսումնական խորհուրդը, պէտք եղած
նախապատրաստութիւններն ընելու և պա-
տասխանելու ներկայ շրջաբերականիս, ազգա-
յին դաստիարակութեան ծաւալմանը համար
փայթ և ջանք շինուելով :

5 Փետրվար 1873

Հալաթիս Փետր յարգանք
Ի Դիւնաց Ուսում. Խորհրդոյ
Ստեփանոսիս Ստեփանոս
Տ. ԷՐՏԵՐՃԵԱՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Այս շրջաբերական գրոյն իրրև պատաս-
խան հեղհեան սկսան տեղեկութիւններ հաս-
նել :

Ա. Տրպիզոն . — Առաջնորդը Կիրատուն
գտնուելով և հոն ստանալով այս շրջաբերա-
կանը, կը ծանուցանէր և կը խոստանար Տրա-
պիզոն վարձած միջոցին տեղեկութիւններ հա-
ղորդել . թէև մինչև ցարդ Տրպիզոն հասած
ըլլալով խոստացած տեղեկութիւնը չհաղորդեց :

Բ. Երզնկա . — Տեղւոյն Ուսումնական
խորհուրդը կը խոստանար ըստ Հրահանգի
Թաղական խորհրդոյ, վարժարանաց Հոգա-
բարձութիւնները կազմել և անոնց ցուցակը
ուղարկել, որոյ շտրհակալութեան զիր գըր-
ուեցաւ, սրահանջուելով նաև իր խոստման
անյապաղ գործադրութիւնը :

Գ. Ստանա . — Ուսումնական խորհուրդը
Թաղական խորհրդոյ Հրահանգին համաձայն
կը խոստանար իրեն առաջադրուած կարգադ-
րութիւններն ընել :

Ատանոյի Քաղաքական Ժողովն մի և նոյն
թուականու նամակ մը դրիած էր և որով կը
ծանուցանէր Ուսումնական խորհրդոյ ընտրու-
թիւնը և անոր պաշտօնավարութեան ինչ ինչ
կէտերուն վրայ տեղեկութիւններ կը հաղորդէր :

Ատանոյի Չօրվերգիվն զիւղացիք Ուսում-
նական խորհրդոյ կազմութեան ետքը, զըպ-
րոցոց մէջ քերականէ և ստղմոսէ զատ զա-
սագիրք չգտնուիլ ծանուցանելով դասադըր-
քեր կը խնդրէին :

Խորհուրդս տեղւոյն Ուսումնական խոր-
հրդոյ շտրհակալութեան զիր գրեց, իսկ յի-
շեալ զիւղացոց խնդրանոց վրայ տեղեկու-
թիւն ուզուեցաւ տեղւոյն առաջնորդէն, ա-
նոնց եկեղեցւոյն նիւթական վիճակը և վար-
ժարանաց ընթացքը իմանալու համար :

Դ. Նիկոսիոն . — Տեղւոյն Քաղաքական
Ժողովն Ուսումնական խորհրդոյ կազմութիւ-
նը կը տեղեկագրէր, և անոր ըստ Հրահանգի
պաշտօնի սկսած և վարժարանաց բարեկար-
գութեան ձեւերիկած ըլլալը կը ծանուցանէր :

Ե. Կարիս . — Ուսումնական խորհուրդը
կազմուած և ըստ Հրահանգի պաշտօնի ձեւ-
նարկած ըլլալը կը ծանուցանէր տեղւոյն Քա-
ղաքական Ժողովը :

Զ. Սերատիս . — Պաւստին Ուսումնա-
կան խորհուրդը կազմուած, Թաղային վար-
ժարանաց Հոգաբարձութիւնքը ընտրուած և
պաշտօնի ձեւերիկած ըլլալին կը ծանուցա-
նէր տեղւոյն Առաջնորդը :

3856-4

Շտրհակալութեան զիր գրուեցաւ, և Ու-
սումնական խորհրդոյ անուանց ցուցակը խնդ-
րուեցաւ : Նաև Խորհուրդս գաւառին վիճա-
կադրական ցուցակը չգանելով Կեդրոնական
ղեւնատան մէջ, գրեց Առաջնորդին, որ
ժամ յառաջ զոյն պատրաստելով զրիկ Կեդ-
րոնական Վարչութեան, որպէս զի այս վիճա-
կին ուսումնական մասին վրայ կարենայ տեղե-
կութիւն ստանալ :

Է. Ռոտուրոյ . — Թէև Ուսումնական
խորհուրդը կազմուած, սակայն վարժարանաց
Հոգաբարձութիւնները ընտրուած չըլլալով,
հրահանգ զրիուեցաւ անոնց կազմութիւնը
փութացնելու և տեղեկագրելու համար :

Ը. Պրապիկ . — Տեղւոյն Ուսումնական
խորհուրդն իր կազմութեան անմիջապէս վեր-
ջը բարեկարգութեան Հրահանգին համաձայն
վարժարանաց Հոգաբարձութիւնները ընտրած
ըլլալը կը ծանուցանէր. աղջկանց համար վար-
ժարան մը բացած էր, ուր 100 ի չափ աղջիկ
ղաւտուէր մօտակայ գիւղերէն բերել տալով
ձրի կը դաստիարակէր, ապագային մէջ զիւ-
ղորէկ վարժուէի հասցնելու մտադրութեամբ :
Նմանապէս Ուսումնարան անուամբ կործանած
վարժարանը յաջողէր է վերատին բանալ և
արհեստ սովորող աշակերտները միայն ընդունիլ
հոն : Այս ուրախատիլ տեղեկութեանց վրայ
ցաւօր սրտի կը յաւելուր թէ օրինաւոր դասա-
տու և դաստիարակ չգտնուելուն համար երբեմն
երբեմն դժուարութիւնք կը ծագին իրենց ջա-
նից առջև, որոյ համար դարման կը խնդրէր :

Նմանապէս զիւղերու վարժարանաց ան-
ձամբ կ'այցելէ եղեր, հոգ տանելով բոլոր
վարժարանաց վրայ, բարեկարգութեան Հրա-
հանգին համաձայն նախնական օրինաւոր վար-
ժարաններ ընելու դանոնք, և այն զիւղը որ
վարժարան չիկայ, բանալ տալու քաջալերելով :

Գոհունակութեան զիր գրուեցաւ իւր ար-
ղիւնաւէտ ձեւերիկութեանը համար, միան-
գամայն ծանուցուեցաւ որ հաղորդէ Խոր-
հրդոյս պէտք եղած դասատուները՝ ի տօրէ-
նութիւն :

Թ. Տիգրանակերտ . — Ուսումնական խոր-
հուրդը կազմուած և իր պաշտօնին ձեւերու-
կած էր, և ամէն ջանք կը տանէր տեղւոյն
վարժարանաց բարեկարգութեան մասին :

Վիճակին Առաջնորդը 1873 Նոյեմբեր 16
նամակաւ վիճակին Աղջային վարժարանաց
վրայ փոքր ՚ի շատէ տեղեկութիւններ հաղոր-
դելով՝ գաւառին Ուսումնական խորհրդոյ հա-
մար քաջալերական կոնդակ մը կը խնդրէր :
Նմանապէս վարժարանաց բարեկարգութեան
Հրահանգին համաձայն վարժարանները բարե-
կարգել և օրինաւոր տեղեկագիր մը յղել կը
խոստանար :

Յիշեալ գոհացուցիչ տեղեկութեանց վրայ
Ուսումնական խորհուրդը ցաւօր կարդաց Ա-
ռաջնորդին ուրիշ մէկ գրութիւնն ալ, որով
տեղւոյն վարժարանաց անբարեկարգ և յե-
տադէմ ընթացքին և Վարչական Ժողովոյ ան-
գործութեան վրայ ցաւօր կը խօսէր, գլխաւ-
րաբար Ուսումնական խորհրդոյ անփութութեա-
նը համար դարման կը խնդրէր :

Խորհուրդս յորդորանաց նամակ գրեց Ա-
ռաջնորդին և Ուսումնական խորհրդոյն, որ
ծագած անհամաձայնութիւնը բառնալու հոգ
տանին :

Ի նիստ 10 Ապրիլ 1874, Խորհուրդս 22
Փետրուար թուականու նամակ մ'ստացաւ
Առաջնորդէն, որով կը գանդատէր հետեւեալ
երկու անպատեհութեանց նկատմամբ :

1. Հրաժարեալ Առաջնորդ Յակոբ Եպիս-
կոպոս քանի մը խուլօրոյն անձինք գլուխը
ժողոված, անդադար կը հարուածէ եղեր Հայ-
րենասէր ընկերութիւնը և յառաջադիմու-
թեան դէմ խոչընդոտներ կը յարուցանէ, այնպէս որ Ուսումնական խորհուրդն չկրնալով
համբերել՝ պաշտօնէ քաշուիլ ստիպուեր է .
որոյ վրայ հրաւիրելով Խորհրդոյս ուշադրու-
թիւնը, վիճակին Ուսումնական խորհրդոյ հա-
մար քաջալերական զիր մը կը խնդրէր :

2. Տիգրանակերտ գտնուող Հայ Ասորի,
Քաղղէայի, Յոյն, Կաթողիկ, Բողոքական,
Լատին, և այլ ազգերու հետ Հայ կղերն
խնամութիւն կրնէ եղեր ՚ի սկզբանէ :



խոչընդոտները տարօրինակ բաներ չըլլալով, և ամեն տեղ ամեն ազգաց մէջ սցստիտի ընդդիմութիւններ տեղի ունենալով, աւելի ջանք ու աշխատութիւն ունենալու է յաղթահարելու համար այս տեսակ արգելքները, ուստի այսպիսի կէտի մը մէջ փոխուստ տալը գովելի դործ մը չի նկատելով: Խորհուրդս յորդորանայ զիր գրեց վիճակին Ռուսոմսկական խորհրդոյն և հրաւիրեց զանի իր սաչտօնին, և երկրորդ խնդիրն ալ Արծնական ժողովոյ ուշադրութեանը յանձնեց:

Իսկ նամակն յանձնուեցաւ Քաղաքական ժողովոյ ուշադրութեանը այս արգելքները բանաւոր համար ազգու տնօրէնութիւն մը և սիրացորդոր կոնդակ մը խնդրելով:

Գարձեալ Առաջնորդը կը շարունակէր իր յուսահատական դրութիւնները. որոց պատասխանեց Խորհուրդս իր 302 համար և 15 ասրիւ 1874 գրութեամբ, որոց ահաւասիկ պատճէնն.

Գերատառի Տէր Ստեփան Վարդապետ Առաջնորդական Տեղապահ Տիրանակերտի

Ձեր Արքութեան Փետրվար 22 թուականաւ երկար նամակը ստացաւ Ռուսոմսկական խորհուրդն և ուշի ուշով ընթերցաւ:

Յառաջադիմութեան դէմ քաղաքիդ մէջ տեղի ունեցած խոչընդոտները տարօրինակ բաներ չեն, ամէն տեղ և ամեն ազգաց մէջ յուսաշարժութեան և լուսաւորութեան դէմ սյղջալի ընդդիմութիւններ տեղի ունեցած են. ուստի վհատելու չէ, ընդհակառակն աւելի յարատեւ ջանք և աշխատութիւն ունենալու է յաղթահարելու համար ամէն տեսակ խոչընդոտները:

Յառաջադիմութիւնը ոչ քիչ ժամանակի մէջ կը կատարուի և ոչ մի կէն ի մէկ, այլ ստորի ճան առ ստորի՛ն. և անոնք որ ժողովրդին յուսաշարժութեանը նուիրուած պաշտօնեայներ են, այժմ է որ համբերատար ըլլան, ներսը և ըստ ամենայնի անձուէր և սարկելու չափ կամ Ձեր բառին համաձայն (էօրմէս միմի) գտած հոցսմիին ալ բուսականանան, և սցստեալ իրենց աշխատութեան փաստն ու պարծանքը աւելցնեն:

Ահա այս բանի մը ստղերը կը գրէ ձեզ, Սուրբ Հայր Ռուսոմսկական խորհուրդն իբրև ՚ի միխիթարութիւն ձեր վշապրեկ սրտին և ՚ի քաջալերութիւն ձեր ձեռնարկութեանցը մէջ: Այդ վիճակին մէջ փոխուստ տալու մաղրութիւննիդ գովելի խորհուրդ մը չնկատեցինք, և կը յուսամք որ ձեր Արքութիւնն ալ երբ սրտը արեամբ կարգայ այս ստղերը, սիրտի համոզուի որ՝ ձեր յարատեւութիւնը փոտաւոր սարգոյ մը յառաջ սիրտի բերէ. իսկ ձեռնարկութեանցը մասին ուրախ եմք տեսնելով որ ամէն բարեկարգութեան և յուսաշարժութեան միջոցները ձեռք առնել կը փոխարիք, այլ սակայն ձեր նկարագրած վիճակին մէջ Ռուսոմսկական խորհուրդն արժան կը համարի իր նկատողութիւնը յառաջ բերել և ձեր ուշադրութեանը ներկայել՝ թէ փոխանակ բարեկարգութեան և յուսաշարժութեան ամէն միջոցները մէկէն ձեռք առնելու, մի առ մի առնուք, և նախ ամենակարեւորէն ըսկըսելով: Այս մասին չուզէր աւելի ընդարձակ խօսիլ և ձեր գրածները կրկնել և անոնց վերայ բացատրութիւն տալ, այլ սո՛ւ միայն կը բուսականանայ ըսել թէ, նախ և առաջ պէտք է դաւանիդ Ռուսոմսկական խորհուրդը ըստ օրինի իր պաշտօնավարութիւնն սխի, որ հիմն է ամենայն բարեկարգութեանց, և կարելի եղածին չափ տեղայդ վարժապետներովը բուսականանայ. կամ փոխանակ անոնց ամենուն տեղ վարժապետ միտուելու, միայն մէկ վարժապետ մը մնալու, անանկ որ կարելի ըլլայ վարժարանայ տեսչութիւնը անոր յանձնել, և միւսներն ալ դարձեալ գործածել անոր տեսչութեանը տակ և այլն:

Հարկ կը համարվմք յաւելու թէ ձեր սյղ տաղնապալից վիճակին դարման մ'ընելու համար Քաղաքական ժողովոյ ուշադրութեանը նարկայացուցինք ձեր նամակը, նոյնպէս նաև Արծնական մասին ունեցած զխտողութիւննիդ Արծնական ժողովոյ ուշադրութեանը:

Պրոց շփոթութիւնները պէտք է որ դձեգ ալ շփոթեցնեն, վասն զի որչափ Պատրիարքի և Վարչութեան մէջ զժտութիւններ ալ ծագին, Երեւոյթական Բնդհանուր ժողովն, որ անոնց դատաւորն է, կանգուն կեցած է միշտ

և անոր շնորհիւր այդ տեսակ զժտութիւնններն ալ շուտ կը դադրին ու կը վերջանան: Մասնանադրութիւնը կայտարարան կաւալարութեան վաւերացեալ օրէնք մ'է, որ ինչպէս Պօլսոյ նոյնպէս ընդհանուր դաւառաց մէջ պէտք է գործադրուի, և եթէ ամէն տեղ ձեզի գործադրուի սխի, այն օրը մեծ բարեբաղդութիւն մը սխի համարուի Ազգին. վասն զի ահա այն տունն Ազգը սխի կարենայ յառաջադիմութեան ու բարեկարգութեան իրական շարժին մէջ մտնել. բայց մինչև այն օրը հուսանականարար զանազան արգելքներ սխի երեսն և խոհական պաշտօնեայ սարտաւորութիւնն է այդ վիճակին մէջ հեռատեւութեամբ վարուիլ: Այլ յուսամք որ այն գրութեան սրտասխանն ստացած ստեղծիս ձեր նախկին յուսահատական նկարագրները չսխի ընթեւումը. այն գրութիւնը կընար կարգալ նաև տեղայդ Ռուսոմսկական խորհրդոյն: Իսկ գալով վիճակիդ Ռուսոմսկական խորհրդոյ վաւերացմանը, արդէն Խորհուրդն 73 Հոկտեմբեր 23 ոյոնինը 256—257 թիւ նամակներով ճանչցած և ընդունած է, ինչպէս ներկայիս ալ կը հաստատէ:

15 Ապրիլ 1874

Խորհրդարան Ղալաթիոյ
 Ա. Պօլսոյ
 Մեակր յարգանք
 Ի Գիւնաց Ռուսոմ. Խորհրդոյ
 Առնկայցի Առնկայեա
 Տ. ԵՓՔԻՆՆԱՆ Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆՆ

Ժ. Խորհրդ. — Ռուսոմսկական խորհուրդը Խորհրդու ընդարձակ դաւառին վիճակագրական տեղեկագրերն իր ուշադրութեան տարկայ ընելով՝ տեսաւ որ բողոքականութիւնը ձարակած է տեղ տեղ ՚ի զիւրջէս, մտնաւանդ ՚ի Խորհրդ, որ մինչև արական և ի գահան սեռի համար ալ ձեւարաններ բացեր են, գրեց Առաջնորդական Տեղապահ Պետրոս Վարդապետին և Գաւառական Վարչութեան, որպէս զի Գաւառին ներկայ Ռուսոմական միճակը ընդ փոյթ նկատողութեան առնուն, և նախ ընտրեն Գաւառին Ռուսոմական խորհուրդն, և անոր յանձնեն վարժարանայ բարեկարգութեան խնդիրը:

ԺԱ. Արքիսակոսոյիս. — Վիճակին Առաջնորդը 1874 Ապրիլ 23 նամակաւ կը պատասխանէր Ռուսոմսկական խորհրդոյ 300 համար պաշտօնագրոյն ծանուցանելով թէ Գաւառին Քաղաքական ժողովն յօժարակամ յանձն առած է Ռուսոմսկական խորհրդոյ սրտտունն միանգամայն վարել:

Խորհուրդս կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովոյ հաճութիւնն ստանալով սխաւ իր յարարութիւնները Գաւառին Քաղաքական ժողովին հետ:

ԺԲ. Արև. — Խորհուրդս լրագրաց մէջ կարգադր, որ Յունվար ամսին սխաւ Արմաշու Մարանութեանը երկասիրութեամբ վերադառնի սխի հրատարակուի Յոս սամասեալը, այս նմալից տեղը բոլոր Ռուսոմսկացի զիւրանաւելի ըլլալու համար գրեց Արևուշու Գերատառի Վանձոր և բաղմարգիւն Միւսրանութեան, որ Գաւառաց համար ամենուրէր մէկ արձաթ մէ՛նտ զին սեփականեն աւնոր, խստանալով նաև ըստ կարի ձեռնառուինի այս մասին յիշեալ Մարանութեան ջանից:

ԺԳ. Մոյ. — Ռուսոմսկական խորհուրդը տեսնելով որ Մշոյ մէջ տակաին Մասնանադրութիւնը գործադրուած չըլլալով, Եասնագրեան Խորհն վարդապետ Մասնանադրութեան գործադիր կերթար ՚ի Մուշ, գրեց անոր, որ երբ հասնի ՚ի Մուշ անմիջապէս տաժամանակեայ Ռուսոմսկական խորհուրդ մը կազմէ և անոր խնամայ յանձն վիճակին վարժարանները, և ստաջին անգամ հոգ տանի դատախարակութեան խնդրոյն: Թէև Խորհն վարդապետ ցարդ չյաջողեցաւ այս առժամանակեայ խորհուրդն ընտրել և ծանուցանել Խորհրդոյս:

Ի նիստ 5 Գեկտեմբեր 1873 Ռուսոմսկական խորհուրդը տեսնելով որ կան սյնակի գաւառներ, ուր Մասնանադրութիւնը տակաին չէ գործադրուած, կամ գործադրութիւնը դեռ խնդրոյ տակ է, գրեց Արևուշու Վարչութեան և Գաւառաց մէջ Մասնանադրութեան գործադրութիւնը խնդրեց:

Նոյնպէս 'ի նիստ 10 տարի 1874 գրեց Սահմանադրութիւնը գործադրուած 9 ը դաւառաց

1. Կարին
2. Սրտակեր
3. Նիկոլիդեա
4. Զմիւռնիա
5. Տիգրանակերտ
6. Պրուսա
7. Երզնկա
8. Թեքիրտաղ
9. Ատանա

և հրաւիրեց որ իւրաքանչիւրն իրենց պաշտօնաւարութեան առաջին օրէն սկսեալ մինչև ցարդ իրենց գործառնութեանց հաշիւն ու համարը օրինաւոր տեղեկագրով մը փութամակի պատրաստեն, և իրենց կնքով և անդամոց ստորագրութեամբը վաւերացեալ յղեն առ Ուսումնական խորհուրդս :

Նոյնպէս 'ի նիստ 15 Ապրիլ 1874, տեսնելով որ կան այնպիսի գաւառներ, որոնց մէջ թէև Սահմանադրութիւնը գործադրուած և գաւառական Վարչութիւնները ընտրուած են, բայց գաւառին Ուսումնական խորհուրդը չէ կազմուած . գրեց այս կարգէն եղող վիճակաց Գաւառական Վարչութեանց, և Ուսումնական խորհրդոց կազմութեանը ստիպողականութիւնը յիշեցնելով, անոր ընտրութիւնը սահանջեց :

Թիւրանեան վարժարան Աֆիօն Գարա-Հիտոր

Շիշմանեան Նշան Էֆէնտի' յատուկ խընդրադրով մը խորհրդոյս ներկայանալով Աֆիօն Գարա-Հիտարի մէջ գիշերօթիկ վարժարան մը հաստատելը ծանուցանելով, զայն Կեդրոնական Վարչութեան պաշտպանութեանը ներքև դնել կառավարիչի, և կը խոստանար ըստ մենայնի Կեդրոնական Վարչութեան հըրահանգացը համեմատ ընթանալ . և Պատրիարքարանի կողմէն տեղւոյն Միւթէսարըֆին յանձնարարական գիր մը կը խնդրէր, զայն ազգային վարժարան համարուիլը ծանուցանելով :

Ի նիստ 13 մայիս 1874 խորհուրդս Աֆիօն Գարա-Հիտարու Թաղական խորհրդէն տեղեկութիւն սահանջելով,

կութիւն սահանջելով, բարի վկայութիւններ ստացաւ, որով Շիշմանեան Էֆէնտիի բացած վարժարանին՝ ժողովուրդին կողմէ մեծ ընդունելութիւն գտած ըլլալը կը յայտագրէր :

Այս վկայութեան վրայ խորհուրդս յիշեալ վարժարանը Աղզային Վարչութեան պաշտպանութեան ներքև առաւ, և տեղւոյն Տօնեկեան Տ. Խաչատուր քահանայն նոյն վարժարանին Կրօնի և Բարոյագիրութեան դասատու որոշելով, գրեց Բաղարական ժողովին և յանձնարարական մը խնդրեց առ Միւթէսարըֆ տեղւոյն 'ի գիտութիւն :

Ի նիստ 27 Մայիս 1874 Սրբազան Պատրիարք Հայրն իր 402 համար պաշտօնագրով կը ծանուցանէր Շիշմանեան Էֆէնտիի բացած վարժարանի մասին առ Միւթէսարըֆին յանձնարարական գիր մը տալը, և յիշեալ վարժարանին կրօնական և բարոյական մասին Կրօնական ժողովոյ կարծիքն առնելու յանձնարարութիւն կընէր :

Խորհուրդս այս նիստին մէջ որոշեց գրել Աֆիօն Գարա-Հիտարի Թաղական խորհուրդին 'ի պատասխան իւր 2 Մայիս գրութեանը՝ թէ Շիշմանեան Էֆէնտիի բացած վարժարանը Կեդրոնական Վարչութիւնը իր պաշտպանութեանը ներքև առած է, վարժարանին ծախքն ու եկամուտը Շիշմանեան Էֆէնտիի անձին սեփական ճանչնալով, միայն ուսումնական ընթացքը ըստ Հրահանգի բարեկարգութեան վարժարանաց լինելու պայմանաւ :

Ասոնք բաւական չէին Գաւառական վարժարանաց բարեկարգութեան համար, ուստի Ուսումնական խորհուրդս հետզհետէ Գաւառներէն առ Վարչութիւնն հասած վիճակագրերն աչքէ անցնելով տեսաւ որ՝ անոնց վարժարանաց բազմատեսակ խնդիրները կատարելու պէս կարողադրելու միջոցներէն դուրի կէն . սրտիցեալ նախնական ուսմանց թեթև մասը մատակարարելու կարող վիճակին մէջ չէին գտնուէր : Հետեարար 'ի նիստ 6 Յունիս 1874 առ ժամն մէկ քանի վիճակաց Ուսումնական խորհրդոց հետեալ Շրջորեքականը հանեց :

Մեծապատիւ Ատենապետ Գաւառական Ուսումնական խորհրդոց . . .

Գաւառի վիճակագրական ցուցակները Կեդր . Ուսումնական խորհուրդն չնկատողութեան առնելով, Գիւղորէից վարժարաններու մասին հետեալ զիտողութիւնները կը փութայ պատուարժան խորհրդոյդ ուշադրութեանը յանձնել :

Ա . Աղջկանց դաստիարակութեանը համար մասնաւոր և գլխաւոր հոգատարութիւն պէտք է, եթէ երկսեռ տղայք 'ի մի վարժարանի պարիակեւել տալ պարտաւորիք, գէթ նստած սենեակինն առանձին ըլլայ : Թիւերուն նայելով ընդհանրապէս կերեկի թէ մանկանց հարիւրին դէմ քսան ուսանող աղջկունք հագիւ կը գտնուին . աղջկանց թուոյն առաւելութեանը մասնաւոր ջանք պէտք է, և այն գիւղերը որ աղջիկ զաւակ վարժարան գրկելու բողբոլին անհոգ կամ անտարբեր գտնուէր են, յորդորէր փութան գրկել աղջիկ զաւակին 'ի վարժարան :

Բ . Ի հարկ է ցարդ ստացած էք Թաղական խորհրդոց Հրահանգը, որուն մէջ նախակըթութեան ուսմանքները սահմանուած են, և անոնք ամէն Աղգային վարժարանի մէջ անհրաժեշտ պիտի աւանդուին : Զեր գիւղորէից վարժարանաց ուսմանքն ընդհանրապէս ընթացանութիւն և գիր ըլլալով, կը խնդրեմ որ վիճակիդ ամէն գիւղորէից մէջ հոգ տանիք հետըհետէ սահմանուած նախակըթական ուսումներն ընդհանրացնելու . որ ուրիշ միջոցաւ չըլլար, բայց եթէ քաղաքի երկսեռ վարժարանաց վրայ յամենայն դրութենէ աշխատելով, և գիւղորէից համար բարեկիրթ վարժապետներ հասցնելով : Եթէ արդէն վարժարաններէդ հասած թէ մանչ և թէ աղջիկ ընտիր աշակերտներ կան, կրնաք յարմար դատած գիւղերուց մէջ վարժապետ կարգել, կամ թէ իւրաքանչիւր գիւղէ յաջողակ աշակերտներ բերել տալով, կրթել վարժարանացը մէջ, և ապա զրկել նոյն գիւղերը դաստիարակութեան :

Այս քանի մը զիտողութիւնները ներկայացնելով սրատուարժան խորհրդոյդ, մեծ յոյս ունիմ որ դաստիարակութեան ամենալավ տղայք առջև ձեր անձնուէր աշխատութիւնները պիտի բարեհաճիք բազմապատկել, և բիշտտեկն ընդհանոր վիճակիդ բարոյական մտաւորական և նիւթական զարգացմանը ձեռնադրուած ըլլալու փառքը վայելել :

Սկնդէա սպասելով գրութեանս պատասխանուոյն :

6 Յունիս 1873
Խորհրդարան Ուսում . Խորհրդոց



Վ Ե Ր Զ Ա Ւ Ն Ն

Ուսումնական խորհուրդս իր պաշտօնաւարութեան համարատուութիւնը համառօտիկատարելէն ետքը պարտ անձին կը համարի հայեացք մը նետել այն գործառնութեանց վրայ, որոց համար աշխատած բայց պարագաներուն բերմամբը անոնց կատարումը իր յաջողութեան թողելու պարտաւորած է : Այս անկատար թողած գործառնութիւններուն գլխաւորներն են :

1. Վարժապետանցի մը կամ կնիքակալական վարժարանի մը հաստատութիւնը, որոց կարևորութիւնը անհրաժեշտ է, և ուրախութեամբ կ'ըսենք որ ուղղակի այս հաստատութեանը դէմ խօսող չի կայ : Բայց հիմայ ներկայ ազգային վարժարանները այնպիսի կերպարանք մ'առած են որոց համար հիմա դաստիարակութիւնը իրրեարուեստ սովորող դաստիարակներու պէտքն անհրաժեշտ եղած է, անանկ որ՝ ուր որ այս անձինքը կը պակասն՝ այն վարժարանները ամենեկին յոտաւազմութիւն չունին և հոն աշակերտք միայն ժամանակ վատնելու կըթան և ոչ բան սովորելու, և որ շարն է, վարքերնին կապականեն, ըստ կը լինէր որ տուներնին միայն, վասն զի եթէ տան մէջ բան չէին սովորէր, գոնէ վարքերնին անարատ կը մնար, և որովհետև մեր ազգային վարժարանաց շատն մէջ, չունէր ամենուն մէջ, կը

սրահին այդ ուսեալ դաստիարակները, ուստի մեր ազգային վարժարաններու շատն ալ իրենց անուան համաձայն արդիւնք չունին : Արդեւ թէ դաստիարակութիւնը ազգի մը կենսական և անենառաջին գործն է, վարժարաններն ալ ազգի մը առաջին կարեւոր հաստատութիւններն են, և դաստիարակներն ալ ազգի մը կենսական սրաշունչներն են, և դաստիարակիւնը կանոց կամ վարժապետանոցն ալ առաջին և կենսական հաստատութիւնն է, արդ այս հաստատութեան ետ մնալու արտաճառ եզրոյնները ազգային յառաջադիմութեան թշնամի և ազգին կործանումը ուզողներ պիտի համարուին : Ըստ մեզ ազգը ամէն բան ետ ձգելու և միայն ասոր համար աշխատելու է, վասն զի ազգը առանց դաստիարակի՝ վարժարան, և առանց վարժարանի՝ դաստիարակութիւն և յառաջադիմութեան չի կրնար ունենալ, և առանց յառաջադիմութեան մարդ չի կրնար ապրիլ այս դարուս մէջ : Դաստիարակութեան խնդիրը կենաց և մահու խնդիր է, երբէք անհոգութիւն և երկարաձգում չի վերցնէր, բաւական է այսչափ ժամանակի կորուստ :

2. Ուսումնական կաճատի մը և Կ. Պօլսոյ վարժարանաց համար ընդհանուր տեսլի մը հաստատութիւնը : — Ասոնք այնչափ կարեւոր են, որ առանց ասոնց ոչ լեզուներնուս ուղղութիւն մը կրնանք տալ, և ոչ կանոնաւոր դասագրքեր կրնանք ունենալ և ոչ ալ կրնանք հսկել Պօլսոյ ազգային վարժարանաց վրայ :

Արդեւ թէ Պօլսոյ ազգային վարժարանները, որ Կեղրոնական Վարչութեան աչքին տակն են, Ուսումնական խորհուրդն անկարող ըլլայ հսկելու և դանձր բարեկարգելու, Պաշտօնական վարժարաններն ինչչափ կարող պիտի ըլլայ հսկել և դանձր բարեկարգել :

3. Այս ամէն բարեկարգութիւնները անթերի կատարելու համար դրասի պէտքն դրասի եղած է, և Կեղրոնական Վարչութիւնները դաստիարակութեան համար հաշուեկշռոյն մէջ գումարներ յատկացնելու են : Մինչև այսօր ազգային դաստիարակութիւնը Պարսկան խորհրդոց տկար ջանիցը յանձնուած է, անոր համար իրաւամբ դանդառներ կ'ըլլան թէ ազգային դաստիարակութիւնը բարձի թողի եւ զած է, և կամ բոլորովին յետնեալ վիճակի մը մէջ կը գանուի :

Ուստի դաստիարակութիւնը ազգին մէջ օրինաւոր կերպով ծաւալելու համար՝ հարկ անհրաժեշտ է անմիջապէս :

Ա. Հաստատել Կեղրոնական վարժարան մը կամ վարժապետանոց մը :

Բ. Սահմանել Ուսումնական կաճառ մը և Կ. Պօլսոյ վարժարանաց համար ընդհանուր Տեսուչ մը կամ տեսուչներ :

Գ. Որոշել Կեղրոնական Վարչութեան հաշուեկշռոյն մէջ դաստիարակութեան համար գումար մը :

ԱՏՈՐԱԳՐԵԱՆ,
Ի 10 Յունիսի 1874

ԱՆԿԱՄՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՅ

ՈՒՄՈՆ ՄԻՔԱՅԵՆԵԱՆ Կանկարչու
ՏԷԼԵՄԱՔ ԷՔՍԷՐԱՅԱՆ Կանկարչոյի
ՅՈՎՍԷՔ ԿԱՆՉԱՅԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԻՒՆԵԱՆ

Գիւսակաղպիկ
Ե. Ե. ԹՈՒՂԱՅԵԱՆ



Գ Ի Ն 4 Ղ Ր Ո Ի Շ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

ԿԸ Ժախուի Ի Դիւանատան Պատրիարքարանի , և ԿԸ գտնուի
Եկեղեցեաց բանկայները :

Handwritten signature

« Ազգային գրադարան »
17064
NL0050812

